Հաստատված է

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի

հոկտեմբերի 27-ի նիստի թիվ 215-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս - էջ 2
2. Ամփոփագիր - էջ 4
3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ - էջ 7
4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ - էջ 8
5. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ - էջ 12
6. Խեղաթյուրումների վերաբերյալ գրառումներ - էջ 16
7. Առաջարկություններ - էջ 20

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի հուլիսի 27-ի թիվ 157-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ ֆինանսների նախարարություն:
Հաշվեքննության առարկան	2022 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, «Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2021թ. դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2121-Ն որոշում, ՀՀ վարչապետի 2021թ. հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2022թ. բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 35-Ա որոշում, ՀՀ կառավարության 2021թ. նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»՝ թիվ 1902-Լ որոշում, ՀՀ Վարչապետի 2018թ. հունիսի 11-ի «ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 743-Լ որոշում և այլն:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի հունիսի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2022 թվականի օգոստոսի 1-ից հոկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ հուլիսի 30-ի թիվ 132–Լ որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույց»-ի համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:
Հաշվեքննության սահմանափակում	2022թ. առաջին կիսամյակի աշխատողներին հաշվարկված և վճարված աշխատավարձերի, ինչպես նաև պարգևատրումների ցանկերի վերաբերյալ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված տեղեկատվությունը հաշվեքննության օբյեկտի կողմից հաշվեքննությանը չի տրամադրվել:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Եղիշե Սողոմոնյանը:

2. Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) (1006-13001) «Կառավարության պարտքի սպասարկում (01070101) «Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճարներ)» (Արտաքին տոկոսավճարներ) (այսուհետ՝ Ծրագիր 1), (1006-13001) «Կառավարության պարտքի սպասարկում «Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճարներ)»-(01070101) (Ներքին տոկոսավճարներ) (այսուհետ՝ Ծրագիր 2) և (1108-11001) «Պլանավորում, բյուջետավորում, գանձապետական ծառայություններ, պետական պարտքի կառավարում, տնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության մշակում և մոնիտորինգ», (01010201) «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» (այսուհետ՝ Ծրագիր 3) միջոցառումների (այսուհետ՝ ԾՐԱԳՐԵՐ) շրջանակներում 2022թ. վեց ամիսների պլանների հանրագումարը կազմել է 104,241,233.1 հազ. դրամ, իսկ ճշտված պլանների հանրագումարը՝ 104,129,133.1 հազ. դրամ, -112,100.0 հազ. դրամի տարբերությունը վերաբերում է Նախարարության Ծրագիր 1-ին (-117,000.0 հազ. դրամ) և Ծրագիր 3-ին (+4,900.0 հազ. դրամ) (տես՝ Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2022թ. վեց ամիսների պլանի և ճշտված պլանի տարբերություններ

(հազ. դրամ)

Թիվ	ԾՐԱԳԻՐ	2022թ. առաջին կիսամյակի պլան	Փոփոխություններ (+,-)						2022թ. առաջին կիսամյակի ճշտված պլան
			ՀՀ կառավարության որոշումներով		*Վերադասի կողմից վերաբաշխման միջոցով*		Ընդամենը՝		
			Գումարը	*%*	*Գումարը (+,-)*	*%*	*Գումարը (+,-)*	*%*	
1	Ծրագիր 1	40,040,866.8	0.0	*0.0*	*0.0*	*0.0*	0.0	*0.0*	40,040,866.8
2	Ծրագիր 2	63,096,607.7	0.0	*0.0*	-117,000.0	*0.19*	-117,000.0	*0.19*	62,979,607.7
3	Ծրագիր 3	1,103,758.6	+4,900.0	*0.4*	0.0	*0.0*	+4,900.0	*0.7*	1,108,658.6
	Ընդամենը՝ ԾՐԱԳՐԵՐ	104,241,233.1	+4,900.0	*0.004*	-117,000.0	*0.02*	-112,100.0	*0.09*	104,129,133.1

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2022թ. վեց ամիսների փաստացի ֆինանսավորումները հանրագումարով կազմել են 97,916,533.2 հազ. դրամ, դրամարկղային ծախսերի հանրագումարը՝ 97,907,650.1 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսերի հանրագումարը՝ 98,055,699.1 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանի Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում ճշտված պլանի և ֆինանսավորման հանրագումարների միջև առաջացած 6,212,599.9 հազ. դրամի տարբերությունները վերաբերում են.

Ծրագիր 1-ին՝ 3,765,752.2 հազ. դրամ (442100) «Արտաքին արժեթղթերի գծով տոկոսավճարներ» հոդվածով՝ 293,752.5 հազ. դրամ, (442200) «Արտաքին վարկերի գծով տոկոսավճարներ» հոդվածով՝ 3,471,999.7 հազ դրամ): Նույն տարբերություններն են արձանագրվել նաև հաշվետու ժամանակաշրջանի Նախարարություն Ծրագիր 1-ի ճշտված պլանի և դրամարկղային ծախսի միջև:

- Ծրագիր 2-ին՝ 2,390,905.6 հազ. դրամ (441100) «Ներքին տոկոսավճարներ» հոդվածով: Նույն տարբերությունն է արձանագրվել նաև հաշվետու ժամանակաշրջանի Նախարարություն Ծրագիր 2-ի ճշտված պլանի և դրամարկղային ծախսի միջև:
- Ծրագիր 3-ին՝ 64,825.2 հազ. դրամ, որից 8,883.1 հազ. դրամը ֆինանսավորման և դրամարկղային ծախսի տարբերությունն է (տես՝ Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ -ի 2022թ. վեց ամիսների ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսի տարբերությունների պատճառների վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	ԾՐԱԳՐԵՐ	2022թ. վեց ամիսներ			Պատճառներ
		Ճշտված պլան	Դրամարկղա-յին ծախս	Տարբերու-թյուն	
1	Ծրագիր 1	40,040,866.8	36,275,114.7	3,765,752.2	Կանխատեսվածի հանդեպ փաստացի եկամտաբերության տարբերություն
2	Ծրագիր 2	62,979,607.7	60,588,702.1	2,390,905.6	• Արտարժույթների նկատմամբ ՀՀ դրամի կանխատեսումային և փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերություն • 6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR, 6-ամսյա EURIBOR և SDR տոկոսադրույքի կանխատեսումային և 2022թ.առաջին կիսամյակի վճարումների համար կիրառված փաստացի դրույքաչափերի տարբերություն, 2021 թվականին և 2022թ. առաջին կիսամյակի ընթացքում մի շարք վարկերի գծով մասհանումների պլանային ցուցանիշի էական թերակատարում, • SDR-ի ԱՄՆ դոլարի նկատմամբ կանխատեսումային և փաստացի ձևավորված փոխարժեքի տարբերություն, • Արտարժույթների նկատմամբ ՀՀ դրամի կանխատեսումային և փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերություն:
3	Ծրագիր 3	1,108,658.6	1,043,833.4	64,825.2	Տնտեսում, վճարում ըստ սահմանված ժամանակացույցի, վճարում հաջորդ եռամսյակում (ծախսը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելուց հետո), ծառայության ձեռքբերման ընթացակարգում գտնվելու և վճարումը 2022թ. հուլիս ամսին կատարելու հանգամաքններով պայմանավորված:
Ընդամենը՝		104,129,133.1	97,907,850.2	6,221,483.0	---

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2022թ. վեց ամիսների ընդհանուր կատարողականը կազմել է 94,0 % (պլանի մնացորդը՝ 6,215,599.9 հազ.դրամ), տարեկան ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 45,3% (տարեկան պլանի մնացորդը՝ 118,430,949.8 հազ . դրամ), ըստ հաշվեքննվող ծրագրերի ներկայացվում է ստորև՝ (տես Աղյուսակ 3)

Աղյուսակ 3

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ -ի 2022թ. վեց ամիսների կատարողականների վերաբերյալ
(հազ. դրամ)

Թիվ	ԾՐԱԳՐԵՐ	Տարեկան ճշտված պլան *(հազ. դրամ)*	Հաշվետու ժամանակաշրջանի		Կատարողական (%) ըստ՝		Պլանի մնացորդ կրկնօրինակ *(հազ. դրամ)*	Տարեկան պլանի կրկնօրինակ *(հազ. դրամ)*
			Ճշտված պլան *(հազ. դրամ)*	Դրամարկղային ծախս *(հազ. դրամ)*	Հաշվետու ժամանակա-շրջանի ճշտված պլանի	Տարեկան ճշտված պլանի		
1	Ծրագիր 1	82,055,511.9	40,040,866.8	36,275,114.7	90.6	44.2	3,765,752.2	45,780,397.3
2	Ծրագիր 2	131,688,563.0	63,096,607.7	60,588,702.1	96.2	46.0	2,390,905.6	71,099,860.9
3	Ծրագիր 3	2,603,408.1	1,108,658.6	1,043,833.4	95.0	40.4	55,942.1	1,550,691.6
	Ընդամենը ԾՐԱԳՐԵՐ	216,347,483.0	104,241,233.1	97,907,850.2	94.0	45.3	6,212,599.9	118,430,949.8

3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նախարարությունից պահանջվել և ստացվել է ամբողջական տեղեկատվություն, որի ուսումնասիրությամբ, ինչպես նաև օգտվելով Նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային համակարգերի շտեմարաններից և հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից, ստացվել են բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

Նախարարության 2022թ. ՀՀ պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում առկա է թվով 1 սահմանափակում (տես՝ «Ներածական մաս»), ինչպես նաև՝ հայտնաբերվել են թվով 2 խեղաթյուրումներ (տես՝ գլուխ 6) և թվով 4 անհամապատասխանություններ (տես՝ գլուխ 5):

Նախարարության 2022թ. վեց ամիսների ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության արձանագրության (ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022թ. հոկտեմբերի 10-ի թիվ ՀՊԵ/08/466-2022 գրություն) վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի պատասխանը ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարի 2022թ. հոկտեմբերի 24-ի թիվ 01/17-1/18379-2022 գրությամբ /կցվում է՝ 4 էջ/:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

4.1 Նախարարության 2022թ. վեց ամիսների ֆինանսական ամփոփ ցուցանշները ներկայացված են ստորև (տես՝ աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Նախարարության 2022թ. վեց ամիսների ֆինանսական ամփոփ ցուցանշներ

(հազար դրամ)

ՀՀ Ֆինանսների նախարարություն		Հաշվետու ժամանակահատվածի պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
1		2	3	4	5
Պետական պարտքի կառավարում		103,177,388	103,060,388	96,888,061	96,888,061
1006-11002	Արտարժութային պետական պարտատոմսերի թողարկմանն առնչվող ծախսեր	4,655	4,655	884	884
1006-11003	ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովում	11,600	11,600	8,257	8,257
1006-11004	Պարտքի կառավարմանն առնչվող տեղեկատվական համակարգերի և ծրագրերի սպասարկում	23,254	23,254	15,065	15,065
1006-13001	Կառավարության պարտքի սպասարկում	103,137,475	103,020,475	96,863,817	96,863,817
1006-13003	Մուրհակների սպասարկում	405	405	38	38
Սոցիալական փաթեթների ապահովում		15,510	15,510	9,246	9,246
1015-12001	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	15,510	15,510	9,246	9,246
Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստում		14,600	13,600	1,315	1,315
1031-11001	Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստում	14,600	13,600	1,315	1,315
Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ		1,428,163	1,581,568	1,340,228	1,504,360
1108-11001	Պլանավորում, բյուջետավորում, գանձապետական ծառայություններ, պետական պարտքի կառավարում, տնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության մշակում և մոնիտորինգ	1,103,759	1,108,659	1,043,833	1,191,882
1108-11002	Ֆինանսական կառավարման համակարգի վճարահաշվարկային ծառայություններ	158,756	158,756	97,817	97,817
1108-11003	ՀՀ միջազգային վարկանիշի տրամադրում	116,461	116,461	78,932	78,932
1108-11005	ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	-	18,528	18,528	18,528

1		2	3	4	5
1108-11006	Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ	-	12,977	12,977	12,977
1108-11008	Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում	-	-	-	-
1108-12001	Դատական ակտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների վճարում	33,000	150,000	72,839	72,839
1108-31001	ՀՀ ֆինանսների նախարարության տեխնիկական հագեցվածության բարելավում	16,187	16,187	15,301	31,385
1108-32002	Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագիր շրջանակներում ԿՖԿՏՀ ներդրում	-	-	-	-
Գնումների գործընթացի կարգավորում և համակարգում		63,550	59,650	50,030	50,030
1137-11001	Էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկում	9,850	9,850	8,125	8,125
1137-11003	Գնումների պլանների կազմման, էլեկտրոնային մրցույթների անցկացման, պայմանագրերի կատարման և գնումների հաշվետվողականության՝ միմյանց ինտեգրված մոդուլների տեխնիկական սպասարկում	53,700	49,800	41,905	41,905
Սոցիալական ապահովություն		4,633	4,633	4,046	4,046
1205-12006	Վնասի փոխհատուցում կերակրողը կորցրած անձանց	4,633	4,633	4,046	4,046
Տարածքային զարգացում		32,174,562	32,174,562	32,174,562	32,174,562
1212-12002	Ֆինանսական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին	32,174,562	32,174,562	32,174,562	32,174,562
	ԸՆԴԱՄԵՆԸ	136,878,406	136,909,911	130,467,487	130,631,620

4.2 Նախարարության 2022թ. վեց ամիսների «Եկամուտներ և մուտքեր»-ի պլանը կազմել է 318,177,868.2 հազ. դրամ, իսկ փաստացին՝ 289,722,932.0 հազ. դրամ (տարբերությունը - 28,454,936.2 հազ. դրամ)՝ ըստ Նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային համակարգից ստացված տեղեկատվության (LS FINANCE, A-0261): 2022թ. առաջին կիսամյակի եկամուտները (մուտքերը) ձևավորվել են թվով 13 ուղղություններից, որոնց գծով առաջացած տարբերություններն ու պատճառները ներկայացված են ստորև (տես՝ աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Նախարարության 2022 թվականի առաջին կիսամյակի եկամուտների վերաբերյալ

(հազար դրամ)

Թիվ	Եկամուտներ (մուտքեր)	Պլան	Փաստացի	Տարբերություններ (+,-)
1	2	3	4	5
	Ընդամենը, *այդ թվում՝*	318,177,868.2	289,722,932.0	-28,454,936.2
1	**Պետական տուրքեր, ընդամենը,** *այդ թվում՝*	1,006,750.0	1,090,871.7	84,121.7
1.1	(900005016689) *Աուդիտորական ծառայությունների իրականացում*	*0.0*	*-151.0*	*-151.0*
1.2	(900005169058) *Բանկային և ֆինանսավարկային կազմակերպություններին լիցենզիաներ տալու համար*	*900.0*	*1,203.0*	*303.0*
1.3	(900005061149, 900005162137 և 900005162616) *Վիճակախաղերի, շահումներով խաղերի բնագավառում լիցենզիաներ տալու համար*	*960,000.0*	*1,020,020.0*	*60,020.0*
1.4	(900005163234) *Փաստաթղթերի տրամադրման համար յուրաքանչյուր քննությունը ընդունելու համար*	*100.0*	*129.0*	*29.0*
1.5	(900005165643, 900005166328, 900005166336, 900005166385, 900005166427, 900005166435, 900005166468, 900005166484, 900005167326, 900005167334, 900005167342 և 900005169025) *Օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար*	*45,750.0*	*69,670.7*	*23,920.7*
2	**Շահաբաժիններ բաժնետիրական ընկերություններում պետական կամ համայնքային մասնակցությունից,**	**6,600,000.0**	**15,835,600.3**	**9,235,600.3**
2.1	(900005020012) *Բանկերում ազատ միջոցների դիմաց. տոկոսավճար*	*6,600,000.0*	*15,835,600.3*	*9,235,600.3*
3	**Պետության տված վարկերի օգտագործման դիմաց վճարներ, ընդամենը,** *այդ թվում՝*	**5,994,514.6**	**5,784,229.7**	**-210,284.9**
3.1	(900005001459, 900005210126, 900005210134, 900005210142, 900005210167, 900005210183, 900005210191, 900005210217, 900005210225 և 900005210233) *Ռեֆինենսներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարներ*	*5,967,918.8*	*5,757,508.0*	*-210,410.8*
3.2	(900005021028) *Ոչ ռեֆինենսներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարներ*	*26,595.8*	*26,721.7*	*125.9*
4	**Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական կամ համայնքի բյուջե մուտքեր**	**0.0**	**18.4**	**18.4**
4.1	(900005280632 - Նախընտրական հիմնադրամ) *Այլ ոչ հարկային եկամուտներ*	*0.0*	*18.4*	*18.4*
5	**Պաշտոնական տրանսֆերտներ** *Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից տրամադրված*	**0.0**	**352,570.4**	**352,570.4**
5.1	(900005002408 - ՎԶՄԲ) *Պետական բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով*	0	169,570.0	169,570.0
5.2	(900005002465 - Յունիսեֆ) *Պետական բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով*	0	183,000.0	183,000.0
6	**Պետական արժեթղթերի տեղաբաշխումից մուտքեր, ընդամենը,** *այդ թվում՝*	**70,312,969.4**	**222,917,707.7**	**152,604,738.3**
6.1	(900005050019) *Պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր*	*70,312,969.4*	*221,606,860.1*	*151,293,890.7*
6.2	(900005050027) *Պետական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր*	*0.0*	*1,310,847.6*	*1,310,847.6*
7	**Արտաքին աղբյուրներից վարկերի ստացում**	**0.0**	**35,106,768.1**	**35,106,768.1**
7.1	(900005051017) *Միջազգային կազմակերպություններից վարկերի ստացում*	*0.0*	*35,106,768.1*	*35,106,768.1*
7.2	(900005510111) *Միջազգային կազմակերպությունների վարկերի ստացում /տոկոսավճարներ/*	0	399,554.0	399,554.0

1	2	3	4	5
8	**Բյուջետային վարկերի ետ վերադարձ, ընդամենը,** *այդ թվում՝*	**195,971.0**	**6,203,395.8**	**6,007,424.8**
8.1	(900005052015) *Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ետ վերադարձ*	*0.0*	*6,203,395.8*	*6,203,395.8*
8.2	(900005000956) *Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ետ վերադարձ*	*195,971.0*	*0.0*	*-195,971.0*
9	**Ներքին աղբյուրների վարկերի ստացում**	2,431,770.1	2,431,770.1	0.0
9.1	(900005550620) *Կայունացման դեպոզիտային հաշվի օգտագործում*	*2,431,770.1*	*2,431,770.1*	*0.0*
10	**Պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ**	**2,867,851.2**	**0.0**	**-2,867,851.2**
10.1	(900005570214) *Պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ՝ հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ*	*2,867,851.2*	*0.0*	*-2,867,851.2*
11	**Վարկերի և փոխատվությունների ստացում (ուղղակի բյուջետային աջակցություն)**	**34,753,499.6**	**0.0**	**-34,753,499.6**
11.1	(900005061248) *Վարկերի և փոխատվությունների ստացում (ուղղակի բյուջետային աջակցություն)*	*34,753,499.6*	*0.0*	*-34,753,499.6*
12	**Ծրագրային աջակցություն (արտաքին աղբյուրներ)**	**60,462,917.5**	**0.0**	**-60,462,917.5**
12.1	(900005061651) *Ծրագրային աջակցություն (արտաքին աղբյուրներ)*	*60,462,917.5*	*0.0*	*-60,462,917.5*
13	**ժամանակավորապես ազատ միջոցներ, ընդամենը,** *այդ թվում՝*	**133,551,624.8**	**0.0**	**-133,551,624.8**
13.1	(900005061669) *ժամանակավորապես ազատ միջոցներ (ներքին աղբյուրներ)*	*133,579,439.4*	*0.0*	*-133,579,439.4*
13.2	(900005000683) *Արտաբյուջետային հաշվի ժամանակավորապես ազատ միջոցներ (ներքին աղբյուրներ)*	*-27,814.6*	*0.0*	*27,814.6*

5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

5.1 «Մեկ անձից գնում» ընթացակարգով կազմակերպված գնման ընթացքում «Procurement.am» տեղեկագրում չեն հրապարակվել հանձնաժողովի քարտուղարի և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված տարբերակները: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 7-րդ բաժնի 43-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը. Բացակայում է:

5.2 «ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-22/18», «ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-22/25», «ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-22/30», «ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-22/9» ծածկագրերով, «Մեկ անձից գնում» ընթացակարգով կատարված գնումների ընթացքում պատասխանատու ստորաբաժանման կողմից գնման հայտերը կազմվել և հաստատվել, ինչպես նաև գնման հրավերները հնարավոր մասնակիցներին ուղարկվել են ավելի ուշ, քան սկսվել է ծառայությունների մատուցումը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը. «Արձանագրության 8.2 կետի վերաբերյալ հայտնում ենք, որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետի՝ Կողմերն իրավունք ունեն սահմանելու, որ իրենց կնքած պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիր կնքելն իրենց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրել է բացատրություն, որը հաշվեքննողների կողմից արձանագրված անհամապատասխանության բովանդակության հետ առընչություն չունի: Վերը հիշատակված ծածկագրերով «Մեկ անձից գնում» ընթացակարգով կատարված գնումները պետք է իրականացվեին (ծառայությունները մատուցվեին) ՀՀ գնումները կարգավորող օրենսդրությանը համապատասխան՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից գնման հայտերի կազմվելուց և հաստատվելուց, գնման հրավերները հնարավոր մասնակիցներին ուղարկվելուց, մասնակցի կողմից գնային առաջարկ ստանալուց և գնահատող հանձնաժողովի (կամ պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի) կողմից գնահատվելուց հետո: Նշված գործողությունները սահմանված են Որոշման 5-րդ «Գնման գործընթացի կազմակերպում» բաժնի 21-րդ կետի 1-ին, 7-րդ «Պայմանագրի կնքումը» բաժնի 34-րդ կետի 2-րդ, 10-րդ «Մեկ անձից գնումների կիրարկման կարգը» բաժնի 71-րդ կետի 3-րդ ենթակետերով, ինչպես նաև 6-րդ «Գնահատող հանձնաժողովը» բաժնի 30-րդ կետով:

5.3 «ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-22/1» ծածկագրով, «Մեկ անձից գնում» գնման ընթացակարգով կատարված գնման արդյունքում կնքված, «Armeps.am» էլեկտրոնային գնումների համակարգում տեղադրված թիվ «ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-22/1» պայմանագրի կնքման ամսաթիվը

(27.01.2022թ.) հստակ չէ՝ կատարվել է փոփոխություն գրիչով: Գնման հրավեր ուղարկվել է 19.01.2022թ., մինչդեռ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության» թիվ «ՏՅ 495811» վկայագիրը, որում որպես ապահովագրության ժամկետի սկիզբ սահմանված է 01.01.2022թ., կնքվել և պատվիրատուին հանձնվել է 28.12.2021թ.:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը «Արձանագրության 8.3 կետի վերաբերյալ հայտնում ենք, որ «ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-22/1» ծածկագրով պայմանագրի ծածկագիրը նշելիս եղել է շփոթմունք ամսաթվի հետ կապված, արդյունքում ունեցել ենք ջնջում: Այնուամենայնիվ, ինչպես պայմանագրի հավելված 1-ում է ամսաթիվն առանց ջնջումների, այնպես էլ պայմանագրի մնացած հատվածներում, ինչպես նաև ppcm համակարգում երևում է պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 27.01.2022թ.:

Հաշվի առնելով, որ առանց մեքենայի պարտադիր ապահովագրման առկայության մեքենան վարելն արգելվում է, վթարի դեպքում էլ չի փոխհատուցվում վնասը՝ տարվա առաջին իսկ աշխատանքային օրը մեքենան շահագործելու իրավունք ունենալու համար մեքենան պետք է մինչ այդ լինի ապահովագրված: Թիվ ՏՅ 495811 վկայագրի 4-րդ կետում հստակ նշված է ապահովագրության ժամկետը, այն է՝ 01.01.2022թ.-31.12.2022թ.: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ 2021թ. բյուջեով չէր կարող ֆինանսավորվել 2022թ. ծախսերը, բացի այդ գնման գործընթաց կարող էր սկսվել տվյալ տարվա գնումների պլանը հաստատվելուց ու պատասխանատու ստորաբաժանում սահմանելուց հետո՝ 01.01.2022թ.-31.12.2022թ. մեքենաների ապահովագրության համար 19.01.2022թ.-ին մասնակցին հրավեր ուղարկելու մասով որևէ հակասություն առկա չէ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել: «ppcm» համակարգում տեղադրված բացի պայմանագրի ամսաթվից, փոփոխված են նաև հավելված 2-ի, հավելված 3-ի և հավելված 3.1-ի ամսաթվերը (փոփոխված չեն միայն պայմանագրի հավելված 1-ում): Գնումների գործընթացներում առաջացող խնդիրների կամ օրենսդրության հնարավոր բացերի կանոնակարգումը գտնվում է Նախարարության տիրույթում՝ որպես պետական լիազոր մարմնի: Ինչ վերաբերվում է արձանագրված անհամապատասխանությանը, ապա հաշվեքննողները մնում են իրենց կարծիքին՝ սույն ընթացիկ եզրակացության 6.2 կետով սահմանված հղումների շրջանակներում:

5.4 «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով, «Գնանշման հարցում» գնման ընթացակարգով կատարված գնման արդյունքում «Յուքոմ» ՓԲԸ-ի հետ 15.03.2022թ. կնքված թիվ «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-22/1» պայմանագրի համաձայն 2022թ. մարտի 15-ից Նախարարությանը պետք է տրամադրվեր մալուխային հեռուստատեսության ամսական ծառայություն: Վերոնշյալ ծառայության շրջանակներում առկա չեն դրամարկղային և փաստացի ծախսեր, «Armeps.am» էլեկտրոնային գնումների համակարգում տեղադրված չեն հանձնման-ընդունման արձանագրություններ, առկա չէ տեղեկատվություն ծառայության մատուցման կամ մատուցված չլինելու վերաբերյալ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը. «Արձանագրության 8.4 կետի վերաբերյալ հայտնում ենք, որ համաձայն «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով՝ պետության կարիքների համար մալուխային

հեռուստատեսության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի (Այսուհետ՝ Պայմանագիր) 3.1 կետի՝ մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը:

Համաձայն Պայմանագրի 3.2 կետի՝ Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 2.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրում չկա ժամկետային սահմանափակում Կատարողի համար, որով Կատարողը պարտավոր կլիներ որոշակի ժամանակահատվածի համար պարտադիր կերպով առանձին հանձնման-ընդունման արձանագրություն և ակտ ներկայացնելու Պատվիրատուին: Քանի որ համաձայն պայմանագրի 7.2 կետի՝ դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, ապա մինչև 18.10.2022թ. (Կատարողի կողմից ներկայացված առաջին հանձնման-ընդունման արձանագրության օրը) տվյալ պայմանագրի շրջանակներում չէին կարող լինել դրամարկղային և փաստացի ծախսեր, «Armeps.am» համակարգում չէին կարող տեղադրված լինել հանձնման-ընդունման արձանագրություններ, ինչպես նաև այլ կերպ չէր կարող ծառայության մատուցման կամ չմատուցման վերաբերյալ որևէ տեղեկատվություն հրապարակված լինել:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

Հաշվեքննողները, ի լրումն արձանագրվածի, փաստում են նաև, որ համաձայն «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-22/1» ծածկագրով կնքված պայմանագրի հավելված 1-ի ծառայության մատուցումն ամսական է՝ 24 ամիս ընդհանուր սահմանված ժամկետով, ինչպես նաև պայմանագրի հավելված 2-ով («Վճարման ժամանակացույց») 2022թ. առաջին կիսամյակի ավարտի դրությամբ նախատեսված էր աճողական կարգով վճարել 118,750.0 ՀՀ դրամ: Հիշատակված ծառայության մատուցման վերաբերյալ 18.10.2022թ. կազմվել է «Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման» թիվ 1 արձանագրությունը և մատակարարի կողմից դուրս է գրվել «Ա 5458920194» հարկային հաշիվը: Համաձայն վերոնշյալ հարկային հաշվի վճարման ենթակա 162,500.0 ՀՀ դրամ գումարը մեկ ամսվա ամսական վարձավճար է՝ մատուցված ծառայության դիմաց (որպես մատակարման ամսաթիվ նշված է 30.09.2022թ.): «Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման» թիվ 1 արձանագրության մեջ մատուցվող ծառայության դիմաց վարձավճարը ևս բնութագրվում է որպես ամսական, սակայն մատուցված ծառայության ժամկետ է նշվում 15.03.2022-30.09.2022թթ. ժամանակահատվածը (6,5 ամիս):

Նշված դեպքում Պատվիրատուն չի օգտվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և

կնքված պայմանագրով ստանձնած իրեն վերապահված իրավունքներից:

6. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

6.1 2022թ. առաջին կիսամյակի Նախարարության Ծրագիր 3-ի «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» (411100) հոդվածի դրամարկղային ծախսի 760,445.9 հազ. դրամի և նույն ժամանակահատվածում Նախարարության «Client-Treasury» համակարգի համապատասխան տեղեկատվության համադրումից առաջանում է 142,803.2 հազ. դրամի տարբերություն: 2022թ. առաջին կիսամյակում հիշատակված հոդվածից Նախարարության կողմից հաշվարկվել և վճարվել է 140,408.9 հազ. դրամի պարգևատրում և 2,394.3 հազ. դրամի օգնություն:

Հղում. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» թիվ 5-Ն հրամանի թիվ 16 «Դասակարգման կիրառման ցուցումներ» հավելված և 2015թ. ապրիլի 9-ի ՀՀ ֆինանսների նախարարի «Հանրային հատվածի կազամերպություններում հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը հաստատելու մասին» թիվ 207-Ն հրամանի հավելված:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը. «Արձանագրության «5. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ 3-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» հատվածի 5.4.2 ենթակետի 2-րդ պարբերությունում արտացոլված «760,445.9 հազ. դրամ» ցուցանիշը իրենից ենթադրում է (411100) հոդվածից կատարված դրամարկղային ծախս՝ ուղղված աշխատակիցների հաշվարկային վարձատրությանը:

Ձեր կողմից նշված «142,803.2 հազ. դրամ» ցուցանիշը վերոնշյալ հաշվարկային թվի մեջ հանդիսանում է աշխատակիցներին վճարված զուտ պարգևավճար՝ առանց հարկերի, սակայն իրականում հաշվարկային պարգևատրումը կազմում է «187,010.8 հազ. դրամ», որոնց տարբերությունը «44,207.6 հազ. դրամ» է, ինչը էականորեն խեղաթյուրում է իրական հաշվարկված և վճարված պարգևավճարը, ինչպես նաև մյուս եկամուտները՝ այդ հոդվածից:

Անդրադառնալով նույն պարբերության վերջում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» թիվ 5-ն հրամանի թիվ 16 «Դասակարգման կիրառման ցուցումներ» հավելվածի և ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 9-ի «Հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման մասին հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը հաստատելու մասին» թիվ 207-Ն հրամանի հավելվածի պահանջներին անհամապատասխանության մասին եզրահանգմանը, հարկ ենք համարում ընդգծել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, պետական մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկների աշխատողների վարձատրության սկզբունքները, նրանց հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի, պարգևատրման, դրամական օգնության կազմակերպման և վարձատրության հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով:

Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձը կազմված է Օրենքով սահմանված հիմնական աշխատավարձից, լրացուցիչ աշխատավարձից և պարգևատրումներից: Լրացուցիչ աշխատավարձը ներառում է հավելումները և հավելավճարները:

Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց պարգևատրումը կարող է իրականացվել ՀՀ պետական բյուջեով նախատեսված պարգևատրման ֆոնդից, աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից, տվյալ մարմնի աշխատանքների փորձարարական կազմակերպման համար օպտիմալացված միջոցներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Պետական ծառայողների պարգևատրման ***աղբյուրները***, չափերը և կարգը սահմանված են Օրենքի 22-րդ հոդվածով, որը, ի թիվս այլնի, սահմանում է, որ պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող կամ ՀՀ օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պետական ծառայողներին կարող է պարգևատրել ***աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից և (կամ) օրենքով չարգելված այլ աղբյուրներից***: Վերը ներկայացված իրավակարգավորումների վերլուծությունից պարզ է դառնում, որ խնդրո առարկա հարաբերություններում Նախարարության գործողությունները համապատասխանել են այդ հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտի պահանջներին, հետևաբար այս մասով որևէ անհամապատասխանություն չի կարող արձանագրվել: Ինչ վերաբերում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-ն հրամանի, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 9-ի թիվ 207-Ն հրամանի պահանջների ենթադրյալ խախտումներին, ապա անհրաժեշտ է նկատի ունենալ, որ իրավական հակասությունների (իրավական կոլիզիաների) և օրենսդրական բացերի դեպքում իրավական ակտերի նորմերի կիրառման և մեկնաբանման հետ կապված հարաբերությունները կարգավորված են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով, որի 40-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, ըստ հերթականության, կիրառվում են հետևյալ կանոնները, ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը՝ 1) ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը (...): Նման պայմաններում ակնհայտ է, որ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի և վերը նշված ենթաօրենսդրական ակտերի միջև բոլոր կարծեցյալ և իրական հակասությունները պետք է լուծվեն հօգուտ առաջինի:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է նաև հետևյալը՝ «Դրամական օգնությունը կարող է տրվել պետական ծառայողի (նրա մահվան դեպքում ընտանիքի անդամների) դիմումի կամ նրա անմիջական ղեկավարի զեկուցագրի հիման վրա, տվյալ մարմնի աշխատակազմի ղեկավարի կամ օրենքով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի կողմից՝ աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցների առկայության դեպքում», ինչը նույնպես փաստում է այն մասին, որ դրամական օգնությունը կարող է տրվել (411100) հոդվածից:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտի առարկությունները հաշվեքննողների կողմից չեն ընդունվում: Արձանագրված անհամապատասխանությունը վերաբերվում է ոչ թե պարգևատրման և/կամ դրամական օգնության տրամադրման իրավական կողմին, այլ, ընդամենը, «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» (411100) և

«Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» (411200) հոդվածների միջև առաջացող հաշվային ընթացիկ և ամփոփ տեղեկատվության, հրապարակված հաշվետվություններում ամփոփված թվային տվյալների արժանահավատությանը, իրավասությանն ու ճշգրտությանը՝ հղում արված հրամանների պահանջներին համապատասխան: Հաշվեքննողների կարծիքով խնդիրը կայանում է միջհոդվածային վերաբաշխման գործիքի հնարավոր կիրառմանը:

6.2 Ըստ սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, հաշվետու ժամանակաշրջանում Նախարարությանը ստորև ներկայացված հոդվածներով ընդամենը 37,765.5 հազ. դրամ մատակարարված ծառայությունների և հաշվետվությամբ ներկայացված փաստացի ծախսի միջև առկա են 7,246.7 հազ. դրամի տարբերություններ: Մասնավորապես.

6.2.1 (421400) «Կապի ծառայություններ» հոդվածով՝ տարբերությունը 1,265.7 հազ. դրամ (մատուցված 6,419.9 հազ. դրամի ծառայություններից):

6.2.2 (423200) «Համակարգչային ծառայություններ» հոդվածով՝ 1,720.6 հազ. դրամ (4,663.3 հազ. դրամի ծառայություններից):

6.2.3 (423900) «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով՝ 4,260.3 հազ. դրամ (26,682.3 հազ. դրամի ծառայություններից):

Առկա է անհամապատասխանություն «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի և ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. հոկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը հաստատելու մասին» թիվ 725-Ն հրամանի հավելվածի 2-44 կետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը. «Արձանագրության «5. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ 3-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» հատվածի 5.6 կետով նշված անհամապատասխանությունների վերաբերյալ հայտնում ենք, որ «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի և ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. հոկտեմբերի 24-ի «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը հաստատելու մասին» թիվ 725-Ն հրամանի հավելվածի 2-44 կետերի պահանջներով նախատեսված է հաշվապահական հաշվառումն իրականացնել հաշվեգրման եղանակով, սակայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ներկայացման վերաբերյալ կարգավորումները նշված իրավական ակտերում բացակայում են: Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարի 2019թ.-ի մարտի 13-ի N 254-Ն հրամանով սահմանվում են պետական մարմինների կողմից ֆինանսական հաշվետվությունների կազմման և ներկայացման ընդհանուր պայմանները՝ մասնավորապես հաշվետվությունների դրամարկղային եղանակով կազմման դրույթները:

Ամփոփելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվապահական հաշվառումը իրականացվում է և հաշվեգրման և դրամարկղային եղանակներով, իսկ ֆինանսական հաշվետվությունները կազմվում են դրամարկղային եղանակով: Հետևաբար հաշվեքննության կողմից համադրության կատարումը և անհամապատասխանության արձանագրումը տեղին չէ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտի առարկությունները հաշվեքննողների կողմից ընդունվում են մասամբ, քանի որ հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների կազմումը հաշվեգրման, իսկ բյուջետային հաշվետվությունները՝ դրամարկղային եղանակով կազմելու հետևանքով, հանրությանը մատուցված հաշվային տեղեկատվությունը կարող է դիտարկվել որպես անարժանահավատ և ոչ ճշգրիտ: Միաժամանակ, հաշվեքննությամբ անհամապատասխանության արձանագրման ոչ տեղին լինելու մասին ակնարկն անընդունելի է:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվում է Նախարարությանը.

7.1 Միջոցառումներ ձեռնարկել Որոշման 7-րդ բաժնի 43-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով սահմանված «Մեկ անձից գնում» ընթացակարգով կազմակերպված գնման ընթացքում Տեղեկագրում հանձնաժողովի քարտուղարի և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված տարբերակների հրապարակման համար:

7.2 Իրականացնել անհրաժեշտ քայլեր «Մեկ անձից գնում» ընթացակարգով կատարված գնումների ընթացքում ծառայությունների մատուցման և պատասխանատու ստորաբաժանման կողմից գնման հայտերի կազմման և հաստատման, գնման հրավերները հնարավոր մասնակիցներին ուղարկման, ինչպես նաև «Գնանշման հարցում» ընթացակարգով պայմանագրով և ժամանակացույցով սահմանված մատուցվող ամսական ծառայության դիմաց վճարումների մասին ՀՀ գնումների օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի, ինչպես նաև՝ պայմանագրով ստանձնած իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության գործիքների պահանջների պահպանման ուղղությամբ:

7.3 Քննարկել և անհրաժեշտ քայլեր ձեռնարկել ընթացիկ հաշվային տեղեկատվության և ամփոփ բյուջետային հաշվետվությունների թվային տվյալների միջև առաջացող արժանահավատության և ճշգրտության չափորոշիչների կիրարկման և կանոնակարգման ուղղությամբ:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության պետ Ա. Ռուբենյան